ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24.02.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ 82-Ա

ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԹԱԹՈՒԼ ԱՐՇԱՎԻՐԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՈՐԴՈՒՆ՝ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՎԻԹ ԹԱԹՈՒԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետի, 35-րդ և 40-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշումը, անչափահաս Դավիթ Թաթուլ Թադևոսյանի օրինական ներկայացուցիչ Սվետլանա Մարգարյանի դիմումը և հիմք ընդունելով Գորիսի համայնքապետարանի Սոցիալական և բնակարանային ուսումնասիրության հանձնաժողովի 24.02.2021թ. արձանագրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի Զառիթափ գյուղի 14 փողոցի 1-ին փակուղի թիվ 3/1 հասցեի նախկին բնակիչ, մահացած զինծառայող (մահացել է զինվորական ծառայության ընթացքում՝ ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 36/202 տեղեկանք) Թաթուլ Արշավիրի Թադևոսյանի որդուն անչափահաս՝ Դավիթ Թաթուլի Թադևոսյանին ծնված 22.05.2017թ., որպես բնակարանի կարքավոր վերցնել հաշվառման բնակարանային պայմանները բարելավելու համար:

2. Աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2021/24/02
Ք.Գորիս